THE
DICKRIS PUBLISHING CO.
NEW YORK CITY.

ՏԻԳՐԻՍԻ ՍԻՒՆԱԿՆԵՐԸ ԲԱՑ ԵՆ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ԱՌՋԵՒ։

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ա. ՏԱՐԻ, ԹԻՒ 52 — ՆԻՒ ԵՈՐՔ, ՇԱԲԱԹ, ՆՈՅԵՄԲԵՐ 5 1898 — ԳԻՆ 3 ՍԷՆԹ

ՄԱՆՐԱԼՈՒՐՔ

Ուսթըրի Գրադարանի վարչութիւնը կազմակերպուած է հետեւեալ կերպիւ. Ա. Գազանճեան՝ Ատենապետ, Գասապեան Ատենադպիր, Սանթօեան և Պոյեաճեան՝ Գրադարանապետք, Մարգարեան՝ Գանձապետ, Սանթոյեան՝ Հաւաքիչ, Յովսէփեան և Ռոդիկեան՝ Լրագրաց հոգաւոր, Գասապեան և Ճանիկեան՝ Գոյքապահ և Տամպուրճեան։

—Ֆոլ Ռիվըրի Գրադարանի վարչութեան կողմէ նամակ մը ստացած ենք որով կը ծանուցանեն թէ վարչութեան անդամներն են Յակոբեան՝ Ատենապետ, Կիրակոսեան՝ Ատենադպիր, Տօնապետեան՝ Գրապահ, Պաղդասեան՝ Գանձապահ, Պուրնազեան՝ Հաւաքիչ։

—Պրայթընի Որբանոցի Ընկերութիւնն հինգ անգղ. ոսկի ղրկեց Պասրիարքարան ի նպաստ որբոց։ Այս ընկերութիւնը այժմ 21 անդամներ ունի։

—Ուսթըրի թերթերն սիւներ նուիրած են Սարգսեան Սրբազանի գալստեան համար. Թէյէկրամ մանրամասն նկարագրած է Սրբազանի գալուստը՝ անոր մեծագիր պատկերով։

—Սթամֆրատէն կը գրեն.

Քաղաքիս Բերիցի երիտասարդաց ընկերութիւնը իր վերջի նիստին մէջ, որ տեղի ունեցաւ ամսոյս 16ին, որոշեց՝ համահաճ հաւանութեամբ՝ առանց ընկերութեան պատրաստ դրամին ձեռք զարնելու՝ օգնել Բերիի դպրոցներուն որք օգնութեան մեծ պէտք ունին եղեր. և այդ առթիւ հանգանակութիւն մը կատարեց մասնաւոր յանձնախմբի մը ձեռամբ։ Հանգանակութեան արդիւնքը եղաւ $159։

Անդամներու թուոյն նայելով պատկառելի գումար մըն է այս. կը մաղթենք բարի յաջողութիւն։

—Լսարանի վերջի ժողովին մէջ միաձայն հաւանութեամբ որոշուեցաւ ցաւակցական հեռագիր մը ղրկել անմիջապէս Մշակի խմբագրութեան Անդրէաս Արծրունիի մահուան առթիւ։ Նոյն գիշեր, ժողովէ անմիջապէսվերջ, հեռագիրը ղրկուեցաւ, որոյ օրինակն է. «Հայ երիտասարդք կողբանԱրծրունին»։ Հոգարարձութիւնը, կը լսենք թէ հայ ժողովուրդի ցաւցութիւնն յայտնած է նոյն խմբագրութեան պարզ նամակով մը։

—Փաթերսընէ Տ. Տ. Թօփալեան կը գրէ.— Նախորդ Կիւրակէ տեղւոյս Հայ Գաղթ. Միութիւնը ժողով մը ունեցաւ, ուր խորհուեցաւ միջոցներ ձեռք առնել, որպէս զի Միութիւնը աւելի օգտակար ըլլայ Հայ երիտասարդութեան մտքերու զարգացման ու յառաջադիմութեան։ Որոշուեցաւ ատենախօսներ հրաւիրել օգտակար նիւթերու վրայ խօսելու համար։ Կը յուսացուի քիչ ատենէն հոս ալ Ուէսթ Հօլօքընի լսարանին չափ օգտակար և կանոնաւոր վիճակի մը մէջ դնել Գաղթ. Միութիւնն։ Նաև որոշուեցաւ նոր տարւոյ առթիւ «Բարեկենդանի Անկուտիներ» դերը ներկայացնել։

—Ֆիլատէլֆիէն Արուսեակ կը գրէ— Այս տեղի հեծելանիւի գործարանի աշխատաւորք գործադուլ ըրած էին անցեալները, որոնց մէջ կային նաև 15—20 Հայեր, որոնք միւս գործաւորներուն հետ սպասեցին ցվերջ։ Սակայն անցեալ շաբթու Խարբերդցի Գէորգ Էլմասեան անուն անձը հոս եկաւ ու համաձայնեցաւ գործատիրոջ. հետ օգէպներով գործարանը լեցնելու։ Հայերուս համոզիչ և սպառնական խօսքերը այս մարդուն վրայ չի կրցին ոևէ ազդեցութիւն չըրին, որ և վերջէն խայտառակութեամբ անյաջող դուրս ելաւ գործարանէն։ Զարմանալին այն է որ այս մարդը հեծելանիւի գործաւոր չէ բնաւ; այլ «լոսթըր»մըն է։

Գործադուլը վերջացաւ. մինակ Հայերս ծաղրուեցանք։

—Այս շաբթու երեք Հայեր—Մ. Սարեան և որդին (Պիթլիզցի) և Գրիգորեան Նիւ Եորք հասան։ Առաջինները Ֆիլատէլֆիայ, իսկ վերջինը Նիւ Օռլէանս մեկնեցան։

—Հայ զինուորներէն մին Փորթօ Ռիքօէն կը գրէ.— Եթէ հոս քիչ մը ոտակ ունեցող արհեստաւորներ, զոր օրինակ դերձակ, սափրիչ, դարբին, ժամագործ, զինագործ, պայտառ ևն. և նաև նպարավաճառ, գինեվաճառ և ծխավաճառ գան, կրնան աղէկ ոտակ շահիլ. կլիման չի վնասեր եթէ լաւ սընունդ առնեն ու շոր տեղ պառկին։ Սիւրէացիները շատ հարստացած են կոճակ ևն. ծախելով։

— Ուսթըրէն կը գրէ Հայկոյ Թոռ. Անցեալ Կիւրակէ հոծ բազմութիւն մը խռնուած էր Ս. Փրկիչ եկեղեցին տեսնելու եպիսկոպոսի մը պատարագը և լսել անոր քարոզը. Սրբազանը $806.50 հանգանակեց եկեղեցիի պարտքին համար, որ Ամերիկայի Հայոց Երուսաղէմի պարտքը դառնցած է, բայց կը յուսացուի որ մօտերս փակուի այս պարտքը։

Տ. Մաշթոց վարդապետ 5 մանչ և 1 աղջիկ երախաներ մկրտեց։ Հայ մանկտիք կը շատնան Ուսթըր. ասոնց համար ալ խորհելու կարգը եկած է։

Տեղւոյս Հայերը ստորագրութիւններ կը հաւաքեն եպիսկոպոսին ներկայացնելու խնդրելով որ Մաշթոց վարդապետը նորէն Փրկիչ եկեղեցիին հովիւ կարգուի։

Տ. Պաղտասար Թաշճեան, քաղաքիս ազգայիններէն, որ անցեալ շաբթու Նիւ Եորքի մէջ ամուսնացաւ, անցեալ Կիւրակէ երեկոյ խնջոյք մը տուաւ բարեկամաց, որոնց մէջ $10. հանգանակուեցաւ ի նպաստ որբոց։

—Ամերիկայի Հայ Աւետարանական եկեղեցիները վաղը պիտի տօնեն վերջի կոտորածներուն զոհ եղող 100 հազար նահատակաց յիշատակը։ Քաղաքիս Աւետարանական մատրան մէջ այս առթիւ պիտի քարոզեն Պատ. Պուդտանեան և Պատ. Քէմալեան։

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏԸ

Անցեալ Կիրակի օր Հոգեհանգստի պաշտօն կատարուեցաւ Ս. Ոսկերերան Եկեղեցւոյ մէջ ի յիշատակ Արծրունի Գրիգոր և Անդրէաս եղբարց։ Խադ Վարդապետ այս առթիւ քանի մը բռնասրսուկ խօսքերով գովեց նոր հանգուցեալն և անոր մեծաւնուն եղբայրը։ Ժողովուրդը շատ ցանցառ էր այդ օր, վասն զի նոյն առաւօտ լուր տարածուած էր թէ Խադ Վարդապետ մերժած էր հոգեհանգիստը կատարել՝ անծանօթ պատճառներու համար, և հետևաբար շատերն բացակայ մնացած էին։ Վերջի պահուն ոտկայն, Հոգաբարձութեան հրամանաւ, հոգեհանգիստը կատարուեցաւ, որ աւելի ժժգոհութիւն յառաջ բերաւ քան ընդհանուր գոհունակութիւն. ոտկայն այսուհանդերձ մայրենի եկեղեցւոյ պակաս թողուցածը նոյն երեկոյ երիտասարդութիւնը կատարեց լիուլի, ընդհանուր ցաւակցական ցոյցերով։



ԶԷՅԹՈՒՆ ՍԻՒՆԱԿԸ

ՀԷՎՐԻԼ, Հոկտ. 26

Խմբագիր.

Ի նպաստ Զէյթունի մինչև հիմայ տեղս հանգանակուած է $50.50։ Տեսնելով որ ուրիշ յանձնախումբեր իրենց քուէներն երկու ընտրելիներու միոյն կուտան, մենք մեր քուէն հարկ կը համարինք Տ. Թավշանճեանի տալ։ Ի դիմաց ՀԷՎՐԻԼԻ Վարչ.

Յ. Տ. Ղազարեան Վ. Զալքեան
Ատենապետ Ատենադպիր

—Նշան Ռուբինեան, թնդանօթաձիկ զօրաց երկրորդ զօրարանակի անդամներէն մին 60 սէնթ ղրկած է մեզ այս նպաստակաւ։

—Նիւ Պրիթընէ կը գրեն մեզ թէ տեղւոյն յանձնախումբը, որոյ տրամադրութեան տակ հարիւր տոլար կայ այժմ, գանձապետի ընտրութեան կսպասէ դրամն անոր ղրկելու համար։

—Լովէլէն կը լսենք թէ տեղւոյն Յանձնախումբը իր տրամադրութեան տակ ունեցած 39 տոլարը Պօրտ ընկերութեան որոշած է ղրկել։

—Ազատ Լսարանի անցեալ Կիրակի երեկոյեան ժողովին մէջ ընդհանուր հաւանութեամբ Վարչութեան պաշտօն տրուեցաւ ազգային ժողով մը կանչել՝ Զէյթունի խնդրոյն համար յանձնախումբ մը կազմելու նպատակաւ։

—Հուսայթնավիլէ կը գրեն թէ անցեալ Կիւրակէ օր 16 անձերու մէջ $40ի հանգանակութիւն մը եղած է, ու երկու անձերէ բաղկացած յանձնախումբ մը կազմուեր է հանգանակութիւնը շարունակելու համար ի նպաստ Զէյթունի։

—Ֆոլ Ռիվըրի մէջ այ ժողով մը գումարուած է նոյն նպատակաւ հանգանակութիւն մը բանալու համար։ Ժողովին մէջ խօսած են Տ. Զիթիրեան և ուրիշներ։ Յանձնախումբ մը ընտրուելով $15.80 հանգանակած է ու դեռ կը շարունակուի հանգանակութիւնը։ Տեղւոյն յանձնախումբը իր քուէն Տ. Կիւրպէնկեանի ղրկած է ընդհ. գանձապետի համար։

ՈՒՐ Է ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆԸ

Նիւ Եորք, Հոկտ. 30

Խմբագիր,

Կը յիշէք անշուշտ այն կրօնական պաշտամունքը որ տեղի ունեցաւ 23րդ փողոցի եկեղեցիին մէջ, և այն հանգանակութիւնն որ տեղի ունեցաւ այդ առթիւ Բարեգործական ընկերութեան ի նպաստ։ Ամանք իրենց նպաստները կանխիկ չի վճարելով՝ ընկերութիւնն ստիպուեցաւ ապառիկներու ցանկ մը Օժանդակ մարմնի մը յանձնել գանձելու համար։ Ընկերութիւնն փոխանակ Օժանդակներէն այս մասին բացատրութիւն պահանջելու, ՏԻԳՐԻՍի միջոցաւ ըսկսեցաւ յիշեալ ցանկին մէջ գտնուած անձանց անուններն փնտռել։ Օժանդակի անդամներէն մին լինելով, մի քանի անձերէ գանձած եմ իրենց նուէրներն, բայց որովհետև ընկերութիւնն, թերևս վաղանձայի պատճառաւ, ո՛չ հաշիւ պահանջած է և ոչ ալ ժողով կընէ, այդ գումարը մնացած է քովս։ Ընկերութիւնն եթէ տակաւին ունի գոյութիւն, թողնիմէ հաշիւ պահանջէ, իսկ եթէ կազմալուծուած է, թող հրատարակուի պաշտօնապէս, որպէս զի այդ դրամներն իրենց տէրերուն վերադարձնեմ։ Պ. Ա. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ

Բարեգործական Ընկերութեան խորին ուշադրութիւնը կը հրաւիրենք այս նամակին վրայ՝ ոա համոզմամբ թէ Ընկերութեան անդամներէն եկող այսօրինակ բողոք մը պիտի կրնայ անտարբեր վարչութիւնն սթափեցնել վերջապէս։ Իսկ Բարեգործական ընկերութիւնը, որոյ պաշտօնեաներն կը թուի ձմեռը արձակուրդէն սովոր են վերադառնալ, կը յանձնարարենք ընդհանուր հասարակութեան։ Ու՞ր է ոտկայն Բարեգործական Ընկերութիւնը, որուն համար ամիսներ առաջ կըսուէր թէ քայքայուած չէր տակաւին...։

Սպասենք քիչ մըն ալ։

Ամէն անոնք որք կը փափաքին Հայ. Եկեղեցւոյ գործոց մէջ ճայն ու յաջորդ ընտրութեան ատեն քուէ ունենալ պարտին այս շաբթու արձանագրուիլ, զի այս է օրինաց տրամադրութիւնը։

ՏԻԳՐԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Կը հրատարակուի ամէն Շաբաթ օրեր,

ՏԻԳՐԻՍ Հրատարակչական Ընկերութեան կողմանէ։

Ց. ՂՈՒՄՐԻԿԵԱՆ, ... ԳԱՆՁԱՊԵՏ.

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳԱՑ ՈՒ ՔԱՆԱՏԱՑԻ ՀԱՄԱՐ	Տլ.	Սթ.	ՕՏԱՐ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ
Տարեկան	1	50	Տարեկան . 10 Ֆրանք.
Վեցամսեայ		75	Բաժանորդագրին կանխիկ
Եռամսեայ		40	վճարելի է միշտ։

Մրարդ կամ նամակ ուղղել հետեւեալ հասցէին՝

To the DIGKBIS PUBLISHING CO., 145 EAST 23D ST, New York City

Entered at the Post Office at w York as Second-Class Mail Matter.

ՆԻՒ ԵՈՐՔ, ՇԱԲԱԹ, ՆՈՅԵՄԲԵՐ 5 1898.

ՄԷԿ ՏԱՐԻ— Ներկայ թուով ՏԻԳՐԻՍ իւր առաջին տարեշրջանը կը բոլորէ յաջողութեամբ։

Թէև այս առթիւ սովորութիւն է համառօտ համարատուութիւն մը ընել ընթերցող ժողովրդին, բայց նկատելով որ հաշիւ տալու յարմարագոյն օրը—տարեգլուխը—մօտ է արդէն, աւելի բանաւոր կը սեպենք համարատուութիւնն յետաձգել առ այժմ, և ուրիշ աւելի կարեւոր խնդիր մը ներկայացնել մեր ընթերցողաց՝ մանաւանդ այն դասակարգին որ Յունվարին կ'ակնկալէ լաւագոյն ՏԻԳՐԻՍ մը տեսնել, և յօժար է այդ մասին լրագրոյր ընկերութեան աջակցիլ ըստ կարի։

Շարթուս մէջ ՏԻԳՐԻՍի ընկերութիւնն իր տարեկան ժողովն ունեցաւ, ուր ներքին ինչ ինչ գործեր կարգադրելէ վերջ նկատողութեան առաւ կարեւոր խնդիր մը —զօրանալու ու լրագիրս զօրացնելու խնդիրը, զոր երկար խորհրդածութեանց ենթարկելէ վերջ՝ միաձայնութեամբ որոշեց՝ փոխանակ անցուկ չրջանի մը մէջ սեղմուելու՝ դիմում ընել հրապարակաւ համակիր բարեկամաց՝ նոր անդամներ —բարոյական ու նիւթական նոր զօրութիւն խնդրել թէ՛ ՏԻԳՐԻՍԸ և թէ ընկերութեանս գործը ընդարձակելու համար։

Նախ ըսելու ենք թէ Ամերիկայի հայ լրագրութեան պատմութեան մէջ առաջին անգամն ըլլալով, լրագրական տարեշրջան մէ առ որ կը գոցուի առանց նիւթական կորստի. մեր ընկերութիւնն ոչ միայն չի վնասեց, այլ փոքր չահ մալ ըրաւ՝ հակառակ շատերու ակնկալութեանց։

Թէ ինչ պայմաններով նոր անդամներ կուզենք, հարկ չէ անչուշտ գրել հոս մանրամասնաբար, բաւական է միայն ըսել թէ լրագրոյս ընկերութիւնն որոշած է բաժիններու սկզբան վրայ նոր անդամներ առնել՝ իր գործ ընդարձակելու նպատակաւ։

Գաղափար մը տալու համար ընկերութեան կառավարութեան մասին ըսելու է թէ՝ գործին առևտրական մասը պիտի կառավարուի վարչութեան մը ձեռքով, որ ընտրուած պիտի ըլլայ բաժնետիրոց քուէով. այսպէս ալ գրական մասը, խմբագրութիւնը ևն. նմանապէս պիտի կառավարուի բաժնետերերէ ընտրուած յատուկ խմբագրական ժողովով մը։ Ընտրող և ընտրելի կրնալ ըլլալու համար մէկը առնուազն բաժին մը ունեցած ըլլալու է, որ կարժէ տասը տոլար միայն։ Իսկ Ընկերութեան ուրիշ օրէնքներն համապատասխան պիտի ըլլան այն ընդհանուր օրէնքներուն որոնցմով կը կառավարուին վաճառականական տներ ու ընկերութիւններ։ Անդամակցիլ փափաքողներն անձամբ կամ նամակաւ դիմելով մեզ պիտի կարողանան ուրիշ մանրամասնութիւններ ալ գիտնալ. և երբ ժամանակը գայ, ընկերութիւնս մի ժողով պիտի կազմէ անդամակցիլ փափաքողներու հետ վերջնական կարգադրութիւն մը ընելու։

Հարկ է սակայն խոստովանիլ այս առթիւ թէ խիստ դժուարին գործ մէ այս որ յանձնած ենք ձեռնարկել. քանի գիտենք թէ շատ յոռետեսներ պիտի պնդեն դարձեալ թէ կարելի չէ Հայոց մէջ ընկերութեամբ գործ յաջողցնել, և թէ այս օրինակ ձեռնարկներ մեր մէջ կռիւներ միայն յառաջ բերելու պատճառներ կրնան սեպուիլ։ Բայց մեր համոզումն բոլորովին տարբեր է. ինչ որ այս մասին ուրիշ ազգեր կրնան ընել, Հայք ալ կրնան յաջողցնել, եթէ յանձն առնեն զայնս օրինաց սրբմադրութեաց համեմատ կարգադրիլ։ ՏԻԳՐԻՍԸ երբ սկսեցինք, շատեր կարծեցին թէ անկարելիութեան դէմ կռուիլ սկսած էինք, և ոմանք ընկերութեանդ մը գոյութիւնն չի յաջողելու մեծագոյն պատճառը կը սեպէին։ Բայց այդպէս չեղաւ. այս թերթը ոչ միայն յաջողեցաւ, այլ յաջողեցաւ գլխաւորաբար ընկերութեան մը կողմէն հրատարակուած ըլլալուն համար, և տարակոյս չունինք թէ մեծագոյն ընկերութիւն մալ պիտի կրնայ յաջողիլ եթէ նոյն ուղղութեամբ քալէ։

Սա առաջարկեալ նոր ընկերութիւնն եթէ կարենանք յաջողցնել, արմատախիլ ըրած պիտի ըլլանք գէթ ոմանց մտքէն սա սխալ համոզումն թէ Հայք ընկերութեամբ կարող չեն գործ ընել. և թերևս ըլլան շատեր, որք՝ քաջալերուած՝ մէկտեղ գան, ու առևտրական ընկերութիւններ կազմեն՝ իրենց բաղդին տէրն ըլլալու համար։ Ազգային տեսակէտէ նայելով առաջարկեալ ընկերութեան յաջողութիւնն պիտի կրնայ օրհնութիւն մը դառնալ. ազգային տպարան մը, զօրաւոր ընկերութիւն մը, հզօր թերթ մը և քիչ մալ դրամ Ամերիկայի մէջ ապագայ Միութեան ազգային Միաբանութեան մը հիմը պիտի կրնան դնել։

Կոպաստենք լսել և չուտ լսել, որպէս զի նոր Տարին չեկած առիթ ունենանք վերակազմուիլ և պատրաստ ըլլալ։

ՇԱԲԱԹԱԿԱՆ ՔՐՕՆԻԿ

Անօրէնութեամբ յղացաւ և ի մեղս ծնաւ զիս մայրիմ»։

Ահա մահարուր, սգլոտած, աւերիչ, յաւիտենական նիւթը և կմախքը քարոզիչներու մեծամասնութեան քարոզներուն։ Մե՛ղքը, դժոխքի աններելի, անքաւելի մեղքը, մի՛շտ մեղքը . . . ։ Կուզէ անմեղուկ դատարկ մը ըլլանք, կուզէ անթիւ հրեշտակ մը. արդանդէն մինչև գերեզման մեղք . . . անդին . . . նորէն . . . մեղքը։ Ճվացող մանկիկն ալ զառամած ծերուկն ալ մեղքի մէջ թաթխուած են, իրենք մեղք են. որովհետև յղութիւնին անօրէն է, ու ծնունդնին մեղքի մէջ։

Եւ Դաւիթի այս այլանդակ, տարապայման և յուսահատական խօսքերը, որոնք թերևս այլաբանօրէն ըսած ըլլայ Սաղմոսերգուն, և կամ իր ամենէն անյոյս ու անխորհուրդ բոպէներուն մէջ— այս խօսքերը տակաւին կը լսենք Հայ պատուլիներու բերնէն։ Շատ աղէկ կը յիշեմ որ Մասաչուսէթի Հայ պատուելիներէն մէկը քարոզին մէջ ըսել կուզէր թէ Հայաստանի խշխալի խոշտանգումներու ու ջարդերու պատճառը Հայութեան վրայ կուտակուած մեղքն էր. ու մեծաքանակ մեղքի տէրերը պատժուեցան մեծաքանակ պատիժով մը . . . եւ, այս անգութ ու սոսկալի պատիժը դեռ քաւումը չէր մե՛ծ մեղքին, այլ միայն չոր պատիժ մը։ Գուցէ դեռ երբեմնական կոտորածներ, քանի որ միշտ մեղքը կայ։

Անցեալ Կիրակէ ուրիշ պատուելի մըն ալ լսեցի. ասոր բերանն ալ նոյնն էր. ասոր նորութիւնն մեղքերը դասակարգելուն մէջն է. մեղքերը դասակարգեց ինչպէս որ մեղաւորներս դասաւորուած ենք . . . ։ «Զատ է հարուստին մեղքը զատ է աղքատինը, տարբեր է գիտունի մեղքը, շատ տարբեր՝ անուսինը». և բաժանումն շարունակեցէք։ Եւ իրաւ ալ ինչ իրաւունքով մէկին ումպ մը գարեջուր խմելու աղքատիկ մեղքը միլիոնատէրի շամբանեաներու հեղեղէն առաջ եկած մեղքին կարգը դասալ։ Բայց քանի որ դասակարգներու բաժանում կը սիրէ պատուելին, կուզէ անշուշտ որ մեղքերն ալ դասաւորուին. ազնուական մեղքը ազնուականին, հասարակն ալ հասարակ մարդուն։ Երանի թէ բաժանումը այս մտօք ընէր պատուելին, բայց կը վախնանք որ մեզ համար ամենէն ծանր մեղքերը պահած ըլլայ։

Սակայն Պատ. Խազոյեան մեղքը դասաւորելու փառքը չէ մինակ որ կը խլէ. այս երիտասարդ քարոզիչը գիւտ մըն ալ գտած է . . . «Ամերիկայի Հայ երիտասարդութեան անկումի պատճառները». պատուելիի Գրդ պատճառը ամբողջովին, իսկ առջի երեքին այ ամփոփումը Կիւրակէ լսեցի։ Ահաւասիկ —Ա. Անկրօնութիւնը, Բ. Նիւթական և ծիսական եկեղեցին պաշտելը, Գ. Կանխաւ Քրիստոնեայ չեղած այս երկիրը գալնին, Դ. Այս երկրին մէջ կարող Հովիւի մը պակասը. և այք ու բենի տառերու թուին չափ թերևս նոր պատճառներ հետզհետէ պիտիտայ քարոզիչը։

Նախ, որոշապէս չէ՞ք տեսներ տրամաբանութեան ցանցառութիւնը այս պատճառներու շարքին մէջ . . . ։ Նախ անկրօն կըլլայ Հայ երիտասարդը, յետոյ մոլեռանդ, եւ՝քը չը փրկուած, ու օր մըն ալ փրկուած՝ Հովիւ մը պէտք է անոր համար . . . ։ Պատճառներու մէջէն երրորդին վրայ մէկ երկու խօսք. «Հայ երիտասարդը, կը հաւատէ պատուելին, հայրենիքի հնցած յիշատակներուն, հողին, մգլոտած կեանքին ու սովորութիւններուն հետ կը կապուի փոքր հասակէն ու այս պատճառ կըլլայ տնոր Ցիսուս Քրիստոսին ու խաչին հետ չը կապելուն, և այսպէս Հայը կելլէ կուգայ այս նոր Երուսաղէմը՝ հեթանոս մը։ Զայրութէն մարդ պատասխանել անգամ չուզեր պատուելիին, որ եթէ Պոլիս ըլլար ուրիշ մակդիրով պիտի ճանչցուէր։

Պատուելի, Հայ երիտասարդութիւնը այն ժամանակ կը գահավիժէ խորխորատներու մէջ, երբ սկսի իրապէս ձեր ձայնին լսել։ Դուք կուզէք ձգել անիկայ երբ անոր գլխուն՝ իբր ուրուր՝ կը ջայլէք թէ անոր սիրելիները յօշոտուեցան Հայաստանի մէջ, որովհետև մեղաւորներ էին. և թէ իբր ալ հոս թշուառ ըլլալու պատճառը իր փրկուած Քրիստոնեայ չըլլալն է։ Կիյնան, այո՛, ո՛չ միայն Հայ երիտասարդութիւնը այլ ամբողջ երիտասարդութիւնները, եթէ փիլոնաւոր քարոզիչներու միջնադարեան այս ձայնին լսեն։

* * *

Հաճի Վիլհելմի Երուսաղէմ մուտքը խիստ հանդիսաւոր եղած է. փոխանակ պատանակի մը, սուլթանական ախոռէն ամենէն ընտիր նժոյգին վրայ հեծած Եաֆայի դռնէն անցաւ անիկայ։ Ովսաննաներու տեղ չօգեաշներ . . . ճամբուն վրայ հանդերձներ փռուած չէին, բայց չ՞է մի որ Եւրոպայի հրէշը Հայերու անթաղ դիակներու բեկորներու վրայէն կոխկռտեց անցաւ։ Հապա սա Վիլհելմուհին ին՛չ ըսել, որ պտըտիկ ոտքերովը Հայ մայրերու արիւնահոս կուրծքերու վրայէն ոստոստելով կանցնի։

Համիտը փոխարինեց Վիլհելմ կայսեր նուէրին . . . . . անոր ընծայելով Ս. Երկրի մէջէն քանի մը կանգուն հող, որուն վրայ կըսեն թէ Աստուածածնի պնակը հաստատուած է եղեր։ Անցեալ օր շքեղ հանդէսով Գերմանական ու Թրքական դրօշակները քովէ քով պարզուեցան այս վայրին վրայ ու Սուլթանը հեռագրով մը Քրիստոսամօր բնակավայրը նոր Պապին, ու ասալ իր կողմէն հեռագրով մը հին Պապին ու գաթոլիկներուն ընծայեց Սուլթանական նուէրը։ Մեծ Մարդասպանը աւելի ազնիւ չ՞է երբ ղէնքի փոխարէն խաղաղութեան ծնողի բնակատեղին կը նուիրէ։

Մինչ մէկ կողմէն Անգղիա և Ֆրանսա պատերազմական պատրաստութիւններու մէջ են Ֆաշօտայի խնդիրին համար, անդիէն Մոսքով զօրքերը կըսուի թէ գրաւած են Զինաստանի կարեւոր մէկ նաւահանգիստը։ Անգղիա հրամայեց իր նաւատորմիղներուն բոպէական հրամանի սպասեն Ռուս նաւատորմիղին վրայ յարձակելու համար։

Դիւանագիտական Ֆիլեանական մարգարէութիւն մը կուզէ՞ք, — այս օրերուս կամ պատերազմ կըլլայ կամ . . . չըլլար։ Թ. Զ.

ՇՈՒԱՐԱԾ ՀԱՑ ՏՂԱՆ

Լուսաւորչական Հայրը— Տղա՛ս, ուր որ ալ երթաս պէտք է քու Հայրենի երկիրդ, անոր հողը, ջուրն ու յիշատակներն անմոռանալի պահես մտքիդ մէջ, զի անոնք քեզ կապուած պիտի պահեն Հայրենիքի հետ։

Բողոքական Մայրը— Զաւակ՛ս, Քրիստոսէ զատ ուրիշ բանի մը մի՛ կապուիր. ծննդավայր, Հայրենիք, հող ու ջուր քեզ օգուտ չունին. ուր հայդ գտնես հոն է Հայրենիքդ։

Խառնածին տղան—Ես ալ չուարեցայ, Աստուած իմ, ին՛չ ընելիքս չեմ գիտեր. Հայրս Վարդապետին քարոզածը կը պատուիրէ ինձ, մայրս՝ պատուելիինը. սակայն ինձ կը թուի թէ ես ո՛չ մէկին մտիկ պիտի ընեմ և ոչ միւսին, զի քանի որ իրենք, որ մի և նոյն երկրէ եկած են, չեն կրնար համաձայնիլ, ապա ես ինչպ՛էս իրենց համաձայնիմ։ ՍՈՒԻՆ

ԵՐԿՆԱՑԻՆ ԼՈՑՍԵՐ

Գրե՛ց Պատ. Յարութիւն Ֆիլեան

Այս քարոզագրքէն ունենալ փափաքողները կրնան մէյմէկ օրինակ ձրի ստանալ դիմելով վարը գրուած հասցէին։ Ուրիշ քաղաքներէ դիմում ընողներն պարտին 9 սենթի ըսթէմբ ղրկել ծախուց համար։ 50

Զամալեան, 400 4դդ ավենիւ, Ն. Եորք

ԱՐՓԻԱՐԻ ԽՆԴԻՐ

ՈՒՐ Է ԱՄԲԱՍՏԱՆՈՂԸ

Փարիզ, Սեպտ. 27

Հոս ձեռքս անցաւ ՏԻԳՐԻՍԻ 44 թիւը որուն մէջ Դաշնակցական մը ստորագրութեամբ պատասխան մը կայ իմ «Դրօշակը զրպարտի՞չ մէ» հարցումիս որ հրատարակուեցաւ նախորդ թուոյն մէջ։

Ես վստահ չէի թէ ով էր զԱրփիար ամբաստանողն —մի քանի անհատնե՞ր, խմբագրական մարմին մը, թէ յեղափոխական մարմին մը—։ Դրօշակ բառով կուզէի հասկցնել խմբագրութիւնը կազմող մէկ կամ աւելի անհատներ, այն ալ միայն հարցական ձևի տակ կրնայի ընել։ Ես իրաւունք չունէի ամբողջ Դաշնակցական կուսակցութիւնը իբրեւ Արփիարի ամբաստանողը նկատել, քանի որ այդ «կուսակցութեան թարգման» Դրօշակի մէջ Արփիարը ոչ մատնիչ և ոչ դաւաճան յայտարարուածէ։

Եթէ Դաշնակցական կուսակցութիւնն է որ Հայրենիքի խմբագիրը դաւաճան կը ճանչնայ, և եթէ Դաշնակցական կուսակցութիւնն է որ կը խմբագրէ իր բերանը եղող թերթը, ինչ՞ու այդ բերնէն երբէք բառ մը չը գրուիր Արփիարի դէմ։

Սարկաւագ Տիգրանի մը (որ չի մեռաւ) դէմ տէռորական գործողութիւն կատարած ըլլալու փառքը ձեռքէ ձեռք կը խլեն կուսակցութիւնները և օդը թռուցիկներով կը լեցնեն, ինչ՞պէս կըլլայ որ 20 տարուան հրապարակագիր, երեսփոխան, Պոլսոյ ամենաժողովրդական խմբագիր, Հնչակեան վարչութեան անդամ անձի մը դէմ կատարուած գործին համար բառ մը իսկ չի գրուիր։

Ի նպաստ յեղափոխական գաղափարին և ի պատիւ Դաշնակցութեան չենք մտաբերած երբէք անձնական ոճրագործութիւն մը, անձնական ըստոր շահերու թելադրութեամբ յերիւրուած զրպարտութիւն մը Դաշնակցութեան վերագրել։ Բայց եթէ Դաշնակցութիւնն կուզէ իր վրան առնել, թող համարձակի իր պաշտօնաթերթի մէջ յայտարարել թէ Արփիար մատնիչ ու դաւաճան է, և թէ անոր դէմ կատարուած տէռորական գործողութիւնն իր կողմէ վաւերացուած է։ Երեք տարիէ այսպիսի տող մը չը կարդացինք։ Ո և է «Դաշնակցականի մը» յայտարարութիւնը ամբողջ Դաշնակցութեան պաշտօնագիրը չի կրնար նկատուիլ։

Եթէ մենք սխալած ենք և յօդուածագիր Դաշնակցականը ուղիղ է, ասպարէզ կը կանչենք ամբողջ «Դաշնակցական զօրաւոր կուսակցութիւնը, և Դաշնակցութեան ճշմարիտ օրկան Դրօշակը իր հռչակաւոր տօքումաններով»։

Այ՛ո, Արփիարը պաւոյ ատեան կը պահանջէ։ բայց ու՞ր է Դաշնակցութիւնը որ ամբաստանող ներկայացնայ։ Կ. Յ. ՓԱՓԱԶԵԱՆ

ՄԵՐ ԹԵՐԻ ԿՈՂՄԵՐԸ

Փէնսիլվանիա նահանգի խորերէն է որ կը գրեմ այս անգամ.

Քարլայլ, ուր կը գտնուիմ Հիմայ, հիւսքանչ աւան մ'է իբր 12 բազար բնակիչով, Ֆիլատէլֆիայէ հինգ ժամ դէպի ներս՝ արևմուտք։

Գեղեցիկ է բնութեան տեսարանը հոս, հեռի քաղաքի աղմկալից ժխորէն անդորր կեանք մը կը տիրէշուրջդ՝ նման Հայաստանի գեղջական կեանքին որ աւերուած չէ քաղաքացիի պժգալի կեղծաւորութեամբ ու անպարկեշտ վարմունքով։ Ոչխարներու նախիր մը լերան կուշտին վրայ պառկած կը տեսնես այս կողմերը փոխանակ միլիոնատէրի ամբարտաւան ապարանքներուն՝ որք ըմբոստօրէն վեր կը բարձրանան մեծ քաղաքներու մէջ՝ առնարդական նայուածք մը նետելով կարծես անանկներու վրայ։ Պարզ հագուստով աղաքներ ու աղջիկներ կը հանդիպին աչքիդ պարտէզներու մէջ ու առուներու եզրը, որք ժպտուն դէմքով ու համեստ վարմունքով պատրաստ կեր և ին ամենայն քաղցրութեամբ խօսելու ու պատասխանելու անցորդին։ Հպարտ լէյտիի մը կամ մեծահարուստ պարոնի մը անարդական նայուածքները չկան հոս որոնց մօտէն աղքատը չի համարձակիր անցնել, զի մի դուցէ իւր խեղճուկ լաթերով աղտոտէ միուն շղարշեայ շրջազգեստը և միւսին մեծագին վերարկուն։

Այս նկարագրութիւնները առայժմ մէկդի թողելով անցնիմ մի քանի խօսք ըսել կարեւոր մի հարցի մասին որ մեր ազգային գոյութեան հետ ուղղակի կապ ունի։

Ինչ՞են մեր թերի կողմերը, ահաւասիկ հարցում մը որուն համար կարժէ որ բոլորս ալ խորհինք։ Այս մասին բուն ըսելիքներս պարզելէ առաջ կուզեմ սիրելի ընթերցողաց պատմել խնդիր մը որ մատամբ յարաբերութիւն պիտի ունենայ մեր թերի կողմերը գտնելու ջանքին մէջ։

Այս տեղ կարեւոր անձնաւորութեան մը Հայոց վրայով յայտնած գաղափարը աւելորդ չեմ սեպեր մեր ուշադրութեան առարկայ ընել։

Հետաքրքրական խօսակցութեան մը շարքին մէջ երբ հարկ եղաւ իւր կարծքիը ըսել Հայ ազգի մասին կարգ մը բաներ բացատրեց ինձ, որոց բովանդակութիւնը հոս կը դնեմ։

«Մտացի, ժուժկալ, ճարպիկ ու բարոյական ազգ մը կը պատկարնայ իմ աչքի առջև, ըսաւ, ամեն անդամ որ Հայ անունը կը յիշուի ինձ։ Իբրև ընդհանրութիւն արբեցող չեն, աւազակ չեն ու իրենց հացը ճարելով ուրիշին բեռ ըլլալ չեն ուզեր. ամենէն քաղաքակրթուած և զարգացեալ ազգերէն միոյն կարգին մէջ պիտի յիշուէր մօտ ժամանակէն, եթէ գձուձ շահասիրութիւնը բռնակալ կառավարութեան ճանկը չը թողէին զայն։ Այս խօսքերէն չըլլայ որ հպարտութիւն զգաս», ըսաւ։

Մեծամտանութեան այս լաւ յատկութեանց հակապակեր՝ կան կարգ մը բաղդախնդիր պարոններ որոնց արարքը այնչափ նուաստ ու գարշելի եղած է որ կարծես ընդհանուր գեղեցկութեան վրայ սև բիծ մը կը ձգէ։ Ասոր վրայ պատմեց թէ ինչպէս Հայկական կոտորածի ժամանակ ու անկէ առաջ կարգ մը ուսեալ բայց խաբեբայ Հայեր (ինչպէս ինք կը կոչէր) եկած են այս կողմերը բարեպաշտ ժողովրդեան գըթութեան դիմելու, որպէսզի օգնեն իրենց տառապող ազգայիններուն։ Շատ մեծկակ հանգանակութիւններ եղան, կըսէ, եկեղեցիներու և ժողովներու միջոցաւ, սակայն անոնցմէ և ոչ մին ուղիղ նպատակին հասան, այլ կուլ տրուեցան այն գող Հայերէ որոնք Հայրենասիրութեան անուան տակ դրամ հաւաքեցին իրենց անձնական հաճոյքին գործածելու համար փոխանակ որբին ու թշուառին հասցնելու։

Ինչ՞ նողկալի նկարագիր, ըսաւ, որ իրենց ազգի թանկագին արիւնէն օգուտ քաղելով իրենք զիրենք բարձրացուցին։ Դառնութեամբ յիշեց երիտասարդի մը արարքը մասնաւորապէս, որուն անամօթութեան ապացոյցը հաստատուն կերևէր։ Ազդկառուր նկարագրութիւններով ու արիւնլուայ տեսարաններու տեղեկագրով ներկայացաւ, կըսէ, եկեղեցիներուն. ժողովուրդը յուզուեցաւ ու արտասուեց. մայրեր իրենց դրամը չը խնայեցին հեռաւոր երկրի թշուառ մայրերուն ձեռք կարկառելու. օրիորդներ օգնեցին իրենց չարչարուող քոյրերուն ու եղբայրներուն։ Այդ երիտասարդը մեծկակ գումար մը գոյացնելէն վերջ հաւատացուց, կըսէ, մեզ թէ անմիջապէս Հայաստան պիտի երթար օգնութիւն հասցնելու իւր Հայրենակիցներուն աշխարհի ամեն կողմէն հառնող նպաստներուն հետ միասին։

Վերջերս մեր եկեղեցւոյ անդամներէն մին, որ մեծ դեր ունեցած էր այդ հանգանակութեանց մէջ, Նիկարայի Ջրվէժին կողմը կերթայ արձակուրդի առթիւ, մէյ մալ նայիս ի՞նչ տեսնէ, այդ նոյն երիտասարդը որ գորգի մեծ վաճառատուն մը բացած առևտուր կընէր Կիրակի օր իւր խանութին փեղկերը բացած։ Կը մօտենայ իրեն ու կըսէ. դուն այն երիտասարդը չե՞ս որ Քարլայլ եկար հանգանակութիւն ընելու. մարդը շանթահար կըլլայ ու չի գիտեր ինչ պատասխանէ, միայն կըսէ ես քեզ չեմ ճանչնար կակազելով մը։

(Շարունակելի) ԿԱՐ. ԳԱԼՈՒՍՏԵԱՆ

ԲԱՑ ՊԱՏԱՍԽԱՆԱԳԻՐ

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԷԻՆ

Հայրենակիցներ,

Դուք մեծապէս կը սխալիք երբ կը կարծէք թէ իրաւունք ունիք պահանջել ինծմէ որ հաստատեմ յուր մը զոր ո՛չ հաստատապէս և ոչ ալ իմ անձնական պատասխանատուութեան տակ ըսած եմ։ Այո՛, լուր կը տարածուի, կըսեն, կը խօսին, լսեր եմ—։ Այդ լուրը, ըլլայ ստոյգ, ըլլայ անստոյգ, անոր պատասխանատու են անոնք որք բուն ծագումին պատճառ եղած են. և թէ ինչ՛ու լոկ տարածայնուող լուրի մը կարեւորութիւն տուի, ըսեմ։ Իմ բուն նպատակս էր, ինչպէս և յայտնեցայ, որ դուք ցաւը ձեր մորթին վրայ զգալով, փորձառութենէն խելաբերուած, բուն իսկ ձեր դատավճռովը յայտարարէք թէ, որ և է անձ մը կամ մարմին մը որ կամբաստանէ ուրիշ անձ մը կամ մարմին մը, տռանց բանաւոր և հաստատուն ապացոյցներ տալու, այնպիսիները կը դասուին «ստախօսներու և զրպարտիչներու» դասը։ Դուք ինծմէ աւելի աղէկ գիտէք թէ ձեր կուսակցութիւնը ինչ՛ան ժամանակէ ի վեր իր արբանեակներով ամեն կողմ ինչպէ՛ս ձեռքի տակէ ամեն կերպ խծբծանքներու և խեղաթիւրումներու դիմած է, ամենասոսկալի կերպով պատաւորելու հնչէ։ Կուսակցութիւնը ընդհանրապէս և անոր պատկանող այս ու այն գործիչը մատնաւորապէս։ Զերիններէն ճշգրիտ տեղեկութիւն, օրինական փաստ և հաստատուն ապացոյց պահանջուած է. անոնք կամ իրարու կամ բոլորովին մութի մէջ եղող անձերու կամ այլանդակ տարածայնութիւններու վրայ ձգած են պատասխանատուութիւնը, և կամ պաստառոյ ատեանի կոչը, տօգումաններու պահանջը և օրինական ձևակերպութիւններով խնդիրները քննելու հրաւէրը։

Հերի՛ք միամիտ ժողովրդեան մտքը պղծեն, սիրտը չփոթեն և անոր անձնուիրութեան եռանդին կայծերը մարեն այս կամ այն գործիչի հասցէին անհիմն և ժանտալից ամբաստանութիւններու հեղեղներ թափելով։ Այդ երևոյթներու առջև էր որ իմ սրտիս դառնութիւնը թափեցի, զի ժողովուրդը իր դէպի յեղափոխութիւնը ունեցած վստահութիւնը կը փոխէր, և այդ պարագային տուժողը Հնչակեան եւ կամ Դաշնակցական Կուսակցութիւնները չէինըլլար, այլ Հայ յեղափոխութիւնն, Հայ ժողովուրդն և Հայրենիքը։

Մենք մեր կողմէն պատրաստ ենք խնդիրները քննելու. դուք ալ ձերինները ստիպեցէք որ մեր հրաւէրին պատասխանեն իբր ազնիւ յեղափոխականներ։ Ըսդ ձեր դատավճռին կամ Դաշնակցութիւնը կը հաստատէ իր ամբաստանութիւնը և կը յայտարարէ թէ անոնք լոկ տարածայնութիւններ են, և կամ ձեր իսկ խօսքով կընդունիք թէ Դաշնակցութիւնը պէտք է «Դասել զրպարտիչներու և ստախօսներու դասը»։

Հայրենակիցներ, Տրէյֆուզի դատին վերաբացման ծանօթ պարագաները մեզի շատ դասեր սորվեցնելու են։

Գ. Պ. ՋԻԹՃԵԱՆ

Նիւ Եորք, Հոտ. 31

ԱԶԱՏ ԼՍԱՐԱՆ

Զիմբնի Քօրնըր Հօլ.

Թիւ 57 Ուէսթ 25րդ փողոց։

Այս Կիրակի երեկոյ, ժամը 8ին 7ին Զէյթունի համար յանձնախումբ մը պիտի ընտրուի, և անկէ վերջ տեղի պիտի ունենայ հակաճառութիւնը, որոյ նիւթն է.

Յեղափոխութիւնը օգտակար եղա՞ւ մեզ համար թէ ոչ։

Տ. Մարկոսեան օգտակար կողմը պիտի փաստէ, իսկ Տ. Սիրականեան վնասակար կողմը։

ՂԱԶԱՐ ԽԱԼԱՃԵԱՆ.

Հնարիչ և հեծելանիւ շինող

Կը կարօտի դրամագլուխ ունեցող մի հայ ընկերի՝ միասեղ Եգիպտոս երթալու և հոն ամերիկեան պայսիքըներ շինելու համար։ Մեծ ասպարէզ ունի այս ձեռնարկ. կրնանք գործ ընել Յունաստանի, Կրէտէի և ուրիշ երկիրներու հետ։ Դրամագլուխի կը կարօտինք հարկաւոր մեքենաները գնելու և Եգիպտոս տանելու համար։

Մեր հասցէն է 12 Իւնիքն ըսթրիթ Պոսթըն, Մասս։

ՀԱՅ ՑԱՃԱԽՕՐԴՆԵՐՈՒՍ

Կը ծանուցանեմ թէ ի դիւորութիւն՝ դեղարանիս նախկին տեսուչը Պ. Ստեփանեան ամէն երեկոյ ժամը 6էն մինչև 8 պիտի ծառայէ իր հայրենակիցներուն։

Պատիւ ունիմ ըսել թէ ասկէ վերջ «Ուինտզըր հէր վիկըր» անուն հրաշալի մազի դեղը պիտի ծախենք չիշը 50 սէնթի։ Հմուտ բժիշկներ կը վկայեն թէ իր տեսակին մէջ լաւագոյնն է մազերը զօրացնելու, բուժելու և նախնական գոյնը պահպանելու համար։

Տակառ մը զուտ Նորվեկեան ձուկի իւղ բերել տուած եմ, որոյ լիպրան 45 սէնթի պիտի ծախենք։

Դեղագիրներն կը պատրաստուին աժան և թարմ դեղերէ։ Փորձեցէք։

ՈՒԻՆՏՍԸՐ ՏՐԸԿ ԸՍԹՕՐ,

Մաքս Հանսպըրկ

472 3րդ ափիւ, Նիւ Եորք։

Ուէսթ Հօպոքընի Լսարանին մէջ վաղը Տ. Պ. Գալէմքարեան Հայերէն և Տ. Յ. Միրզաեան Անգլիերէն ճառեր պիտի կարդան։ Տ. Պ. Վարդանեան արտասանութիւն մը պիտի ընէ։

ՊՈՒԼՂՈՒՐ--ՊՈՒԼՂՈՒՐ--ՊՈՒԼՂՈՒՐ

ՊԱՂՏԱՍԱՐ ԹԱՇՃԵԱՆ ԵՒ ԸՆԿ.

B. TASHJIAN & Co.,

53 MAIN ST., BANGS COURT,
WORCESTER, MASS.

Կը ծանուցանեն արգոյ հասարակութեան թէ իրենց փայտի գործը յաջողցնելէ վերջ՝ հատատածենայժամ պուլղուրի և ծեծածի գործարան մը վերայիշեալ անուան տակ։ Այս գործարանի մէջ պատրաստուած ապրանքներն ոչ միայն դիւրամատչելի գներով կը վաճառուին, այլ և մաքրութեան ու տեսակի կողմէ անհամեմատ ընտիր են ուրիշներէ։

Խանութպաններու համար խոշոր կամ մանր պուլղուրի փաուէնը կարժէ 3 սէնթ, իսկ տուներու համար $3\frac{1}{2}$ սէնթ։ Տուներու և ճաշարաններու համար դիւրութիւն տալու նպատակաւ որոշուած է մինչև 25 փաուէնա քանակութեամբ ապրանք վաճառել։

Ուրիշ քաղաքներէ յանձնարարութիւնք փութով և ճշդիւ կը կատարուին։

Փորձեցէ՛ք անգամ մը և գոհ պիտի մնաք։

Վճարումներն կանխիկ կըլլան։ Ճանապարհի ծախսը գնողին վրայ է։

ՊՈՒԼՂՈՒՐԻ ՄԻԱՑԵԱԼ ԸՆԿԵՐՈՒԹ.

BULGUR MANUFACTURING CO.

151 Union St, WORCESTER, MASS.

Կը ծանուցանեն թէ երկարատև փորձառութեան շնորհիւ իրենց շինած պուլղուրը մեծ ընդունելութիւն գտած է ամէն տեղ։ Առանց քարի և անախորժ հոտի Պուլղուրը ամէն հայ տունէ կը փնտռուի։ Մենք, որ միակ Պուլղուրի գործարանն ունինք այս քաղաքի մէջ, մեր բոլոր ժամանակը տուած ենք անոր յաջողութեան համար։ Մեր յաճախորդք եթէ գոհ չի լլինին մեր ապրանքներէն դրամին ետ կը տրուի, թէև ցայսօր ոչ մի հայ տժգոհութիւն յայտնած է։ Մեզ համար կը վկայեն հայ տիկիններ։

Պուլղուրի լիպրան կարժէ $3\frac{1}{2}$ սէնթ խանութներու և ճաշարաններու համար. իսկ տուներու համար 4 սէնթ։ Յանձնարարութիւնք ճշդիւ կը կատարուին։ Փոխադրութեան ծախքը գնողին վրայ է։

ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԳԻՏԱՐԱՆ

Ցերորդ Տպագրութիւն

Մաքսուէլ Սըմբրվիլ

Հրատարակիչ

Կը բաղկանայ 25 մեծադիր հատորներէ, որք կը վաճառուին բաժանորդագրութեամբ միայն։

Սոցա գինն է,

Կտաւեայ կազմ	02 ոսկ.	50	սէնթ
Կէս կաշիակազմ	87 „	50	„
Փառակազմ	100 „		

Առաջին տեսակէն կը գրկուի անոնց որք յանձն կառնեն վճարել ամիսը 2 ոսկեր 50 սէնթ։ Երկրորդին ամսավճարն է 3 ու կէս ոսկեր, իսկ վերջինին՝ 4 ոսկեր։

Այս Համադիտարանն Ամերիկեան միակ արտօնեալ տպագրութիւնն է. մնացեալք անկատար են ամէն կերպով։

Մանրամասնութեանց համար դիմել Խմբագրութեան։

ՏՊԱՐԱՆ ՏԻԳՐԻՍԻ

Այս տպարանի մէջ կը տպագրուին թէ՛ Հայերէն և թէ՛ Անգլիերէն ելեզուաւ ամէն տեսակ այցետոմս, ամակագրեր, հրաւիրագիր, շրջաբերականներ, տետրակներ ևն.։

Մեր գները գոհացուցիչ են. տպագրութիւնն՝ մաքուր։

Ուրիշ քաղաքներէ եկող յանձնարարութիւնք կը կատարուին փութով ու խնամով։

ԹԱՇՃԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԱՑԱԳՈՐԾ ԵՒ ՄՍԱՎԱՃԱՌ

573-579 ՔԷՅՄՊՐԻՃ ԸՍԹՐԻԹ

ՔԷՅՄՊՐԻՃ, ՄԱՍՍ.

Պատիւ ունի ծանուցանել արգոյ հասարակութեան թէ իւր պատրաստած հացը թէ՛ գնի և թէ՛ տեսակի մասին չէ կարելի գերազանցել։ Ո՛չ կը փչրի և ոչ ալ թթու է։ 1 փնտ. հացը 3 սէնթ միայն կարժէ։ Միսը միշտ թարմ է ու գները գոհացուցիչ. կը՞վաճառէ նաև ածուխ, քարիւղ և՞վառելիք փայտ։ Ունի առանձին ճաշարան մը կցած յիշեալ ճիւղերուն, ուր կը պատրաստուին ընտիր կերակուրներ. առատ և ժան։ Մասնաւոր կառք ունի տուն փոխադրելու համար, խիստ ժան գնով։

Փորձեցէք անդամ մը։

ԺԱՄԱԳՈՐԾ

Գիտէ՞ք որ ժամացոյց մը բանելով չի հիններ. այն ժամանակ կը ոչնչանայ ժամացոյց մը երբ անոր մէջ պղտիկ խանդարմումը չի կրկնը շատ փորձառու չէ արհեստին մէջ։

Մենք 15 տարուայ փորձառութիւն ունինք։ Կը նորոգենք ամէն կարգի ժամացոյցներ ժան գներով։

Դիմել—607—3րդ Ավենիւ.
(Սափրիչի խանութը) Ս. Երէցեանի։

ՊԵՏՐՈՍ ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆ ԵՒ ՑՈՎՀԱՆՆԷՍ ՓԱՍՔԱԼ

ՀԱՑԿԱԿԱՆ ՃԱՇԱՐԱՆ

Թիւ 154 Իսթ 27րդ փողոց, Նիւ Եորք

Նոր Կարգադրութիւն, Նոր Վարչութիւն եւ Նոր Ճաշարան

Պատիւ ունին ծանուցանել հասարակութեան թէ ամսոյս 7էն սկսեալ գնած ու բոլորովին կերպարանափոխուած են այս ճաշարանն՝ ներքին վարչութեան տեսակատէ։ Խոհարարութիւնն, մաքրութիւնն, գործածուած թարմ մսի և նպարեղէններու տեսակն վստահ են թէ պիտի գնահատուի ընդհանուր ժողովրդէն. բայց վստահ ըլլալու համար թէ ամէն ինչ առաջնակարգ և գոհացուցիչ է այս ճաշարանի մէջ, կը հրաւիրուին ազգայինք փորձել գէթ մի անգամ։

Յ. Մ. ՂՈՒՄՐԻԿԵԱՆ,

ԱՌԱՋՆԱԿԱՐԳ ԴԵՐԶԱԿ։

Թիւ 628 3րդ Ավենիւ, Նիւ Եորք։

ՏԵՂԱԿԱՆ ԵՒ ԵՒՐՈՊԱԿԱՆ

Ընտիր կերպասեղէններէ վայելուչ հագուստներ կը շինէ դիւրամատչելի գիներով։

Ա. ԹՕՓՈՒԶԵԱՆ.

ԿՕՇԿԱՎԱՃԱՌ ԵՒ ԿՕՇԿԱԿԱՐ,

Թիւ 239 Իսթ 26րդ փողոց, Նիւ Եորք

Այս խանութին մէջկը վաճառուին ամէն տեսակ կօշիկներ խիստ ժան գներով։ Մեր հայրենակիցներէ փորձ մը միայն կը խնդրենք։ Նոր ապսպրուած կօշիկներ կը կարենք ձեւաւոր եւ վայելուչ կերպով։ Կը նորոգենք հին կօշիկներ չափաւոր գներով։ Ուրիշի մը երթալէ յառաջ ինձ եկէք անգամ մը. եւ վստահ եղիք որ շատ գոհ պիտի մնաք։ 239 Իսթ 26րդ փողոց

Արանց կօշիկներ	$1.25էն	մինչև	$5,00
Կանանց «	$1.25էն	«	$2.50
Տղայոց և աղջկանց կօշիկներ	$0.50էն	«	$1.50

ՀԻՐԶՕԼԱ

ՄԱԶԻ ԴԵՂ.

Կը զօրացնէ, կը մաքրէ, կը փայլեցունէ մազերը ու թափելը կը դադրեցնէ։ Կը բուժէ նաև մորթի հիւանդութիւնն ու կը մաքրէ թեփերը։

Միանգամ փորձել բաւական է սա գեղին արժէքը գիտնալու համար, որ արևելեան խոտերէ պատրաստուած է յոյժ հաճելի մի հոտով։

Կը ծախուի փոքր գեղագրծնեռուն քով։

Գին 50 Սէնթ միայն։

Կարելի է ստանալ նաև ՏԻԳՐԻՍԻ ընկերութենէն։

Կը վաճառուի նաև Տ. Յ. Բարակեանի քով, Թիւ 45 Էքսչէնճ ըսթրիթ, Ուսթըր, Մասս։

AMIN MERHIGE & Co.

29 BROADWAY, NEW YORK, Room 212

ՄԵԾԱԲԱՆԱԿ (Հօլսէյլ) ՎԱՃԱՌԱԿԱՆՔ

Արևելեան և Տաճկական Ապրանաց

Այս վաճառատունն իր տեսակին մէջ ամենամեծն է ի Նիւ Եորք։ Հոն կը վաճառուին ամէն տեսակ ասեղնագործներ, սեղանի, մէնթըլի, փիանոյի ևն. մետաքսեայ և ոսկեթել ծածկոցներ, Դամասկոսի վարագոյրներ, Բերիայի աղապանի, քէֆիա, ևն. ևն.։

Հայ վաճառականք կը հրաւիրուին փորձել միանգամ։ Ուրիշ քաղաքներէ եկող յանձնարարութիւնք փութով և խնամօք կը կատարուին։ Գներն չափաւոր և ապրանքներն լաւագոյն լինելով՝ ուրիշ ո՛և է տուն չէ կարող մրցիլ այս տան հետ։

MARK C. MEAGHER,

St. Paul Building, No. 220 Broadway, New York City.

ՀԱՍՏԱՏՈՒՆ ԿԱԼՈՒԱԾ ՄԵԾԱԳՈՅՆ ՆԻՒ ԵՈՐՔԻ ՄԷՋ

$1.00

Շարաթական մի միայն Մէկ տուներ վճարելով կրնաս գնել մի տունի տեղ ի Մուրէյ Հիլ Փարք, որ Մեծագոյն Նիւ Եորքի աշխարհագրական կեդրոնն է Ֆլըշինկի կից։ Սա տեղը ծովի մակերևոյթէն 120 ոտք բարձրութիւն ունի, ուր 34րդ փողոցի Ֆէրրիէն Հինգ սէնթով կերթցուի 19 բոպէէն։

Այս Հողերը տեսնել փափաքողներուն երթևեկութեան համար ձրի տոմս կը տրուի։ Երթալ ուղղողներն ամէն Հինգշաբթի և Կիրակի օրեր, կէս օրէ վերջ ժամը մէկ ու կէսին, ներկայ գտնուելու են Լոնկ Այլընտի Ֆէրրիին առջև, Իսթ 34րդ փողոց, ուր պիտի կրնան տոմս ստանալ Տ. Ս. Եարբրմեանէ, որոյ հասցէն է 298 Ուէսթ 12րդ փողոց։

* * * * * *

Բնակութեան համար վայր մը ընէ Փարք, որուն գեղեցիկ բնականաբարպիտ եթէ մի անգամ այս վայր։ Կան սարակաց ու անրոցներ, եկեղեցի-



* * * * * *

մար խիստ յարմար։ Մուրէյ Հիլ ղեցիկ տեսարանը հրապուրէ զձեզ հաճիք այցելել հիմայ հոն հահատական դըպներ և այլն և այլն։

* * * * * *

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԵԱՆՑ ՄԱՍԻՆ

Նկատելով որ ամէն կողմերէ շատ մը բանաստեղծութիւններ կը ղրկուին մեզ, և նկատելով որ ՏԻԳՐԻՍԻ մէջ՝ տեղւոյ անձկութեան պատճառաւ չենք կարող զանոնք հրատարակել, որոշած ենք՝ մեր ընդունած այս ոտանաւորներն՝ մեծաւ մասամբ՝ առանձին հատորի մը մէջ ամփոփել, պայմանաւ որ ամէն փափաքող անձ իր ոտանաւորին համար հարկ եղած շարելու, էլէքթրօթայպի չինելու և տպագրելու ծախքերն վճարել յանձն առնէ կանխաւ։

Հեղինակներն իրենց իւրաքանչիւր ոտանաւորին համար մէկ կամ երկու օրինակ պիտի ստանան հրատարակուած հատորէն՝ երբ լոյս տեսնէ։

Այս հատորը պիտի անուանուի «Ժողովրդական քնար»։

Մանրամասնութեանց համար գրել Լրագրոյս Խմբագրութեան։

S.& N.D. MERHIGE & Co.

92 WASHINGTON ST., NEW YORK.

ՎԱՃԱՌԱԿԱՆՔ

Հին և նոր ամէն տեսակ զէնքերու, Գաղղիական գոհարեղէններու թէ՛ իրական և թէ նմանութիւն։ Կը վաճառեն արևելեան և տաճկական ամէն տեսակ ասեղնագործեր, սեղանի, դաշնակի, մէնթըլի ևն. ծածկոցներ ոսկեթել և մետաքսահիւս։ Դամասկի մետաքսէ և մանածէ վարագոյրներ, Հալէպի աղապանի, քէֆիաներ ևն.

Հայ անհատներ ինչպէս նաև հայ խանութպաններ ու վաճառականներ երբ պէտք ունենան այս կարգի ապրանքներու, 10 առ 100 շահելէ զատ, գոհ պիտի մնան այս ծանօթ վաճառատունէն գնելով։ Ուրիշ քաղաքներէ յանձնարարութիւնք ճշտիւ կը կատարուին։